

## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության և Պորտուգալիայի  
Հանրապետության միջև կրթության, գիտության և մշակույթի  
բնագավառներում համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետությունը և Պորտուգալիայի  
Հանրապետությունը՝ ի դեմս կառավարությունների (այսուհետ՝  
Կողմեր), ցանկանալով զարգացնել երկու երկրների միջև  
համագործակցությունը կրթության, գիտության, մշակույթի, սպորտի,  
երիտասարդության և հանրային հաղորդակցման ոլորտներում,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

### Հոդված 1

Կողմերը հանձն են առնում նպաստել և զարգացնել երկկողմ  
համագործակցությունը կրթության, գիտության, մշակույթի, սպորտի,  
երիտասարդության և հասարակական հաղորդակցման ոլորտներում:

Կողմերը կոյուրացնեն երկու երկրների հաստատությունների և  
քաղաքացիների միջև շփումներն ու փոխանակումը վերը նշված  
բնագավառներում:

### Հոդված 2

Կողմերը կխրախուսեն հաստատությունների և  
կազմակերպությունների համագործակցությունը կրթության  
բնագավառում: Իրենց հնարավորությունների սահմաններում և  
փոխադարձության հիման վրա նրանք կօժանդակեն.

ա) համալսարանների և մյուս բարձրագույն կրթական  
հաստատությունների միջև համագործակցությանը, ինչպես նաև  
մասնագետների փոխանակմանը,

բ) մյուս երկրի ուսանողներին և հետազոտողներին ուսման  
վարձի համար դրամաշնորհների հատկացմանը,

գ) ցանկացած երկրի լեզվի, գրականության և մշակույթի  
ուսումնասիրման խթանմանը մյուս երկրի համալսարաններում և  
կրթական հաստատություններում,

դ) գրքերի, հրատարակումների, միկրոֆիլմերի, ձայներիզների և  
այլ կրթական, գրական, պատմական, մշակութային կամ գիտական  
նյութերի փոխանակմանը:

### Հոդված 3

Կողմերը կորոշեն այն մեթոդներն և պայմանները, որոնցով

երկուստեք կճանաչեն գիտական աստիճանները, վկայագրերը և մյուս Կողմում պահանջվող այլ վկայականները:

#### Հոդված 4

Կողմերը, պատմության, ավանդույթների, արխիվների, գրադարանների, գրականության, արվեստի, երաժշտության, պարի, կինեմատոգրաֆիայի, ինչպես նաև ստեղծագործական և մշակութային գործունեության այլ բնագավառներում փոխադարձ իմացությունը խթանելու նպատակով, պարտավորվում են իրենց հնարավորությունների սահմաններում նպաստել.

- ա) մշակույթի և արվեստի գործիչների փոխանակմանը,
- բ) մյուս երկրում համագումարներին, գիտաժողովներին և այլ նման միջոցառումներին մասնակցությանը,
- գ) ցուցահանդեսների փոխանակմանը,
- դ) ստեղծագործական խմբերի փոխանակմանը,
- ե) կինոյի շաբաթների անցկացմանը:

#### Հոդված 5

Կողմերից յուրաքանչյուրը իրավունք կունենա մյուսի տարածքում հիմնել մշակութային հաստատություններ՝ այն պայմանով, որ դրանք կգործեն ըստ տվյալ երկրի ներքին օրենսդրության դրույթների:

#### Հոդված 6

Կողմերը կձեռնարկեն անհրաժեշտ միջոցներ արվեստի գործերի, փաստաթղթերի և այլ պատմական կամ հնագիտական արժեքների ապօրինի տեղափոխումը արգելելու և պատժելու ուղղությամբ:

#### Հոդված 7

Կողմերը կարող են առանձին համաձայնագրեր կնքել գիտական և տեխնոլոգիական, ինչպես նաև հասարակական և կոնկրետ մշակութային այլ բնագավառներում:

#### Հոդված 8

Կողմերը կխրախուսեն պետական և ոչ պետական մարզական կազմակերպությունների համագործակցությունը՝ նպաստելով փոխադարձ մարզական պարապմունքների անցկացմանը և դրանց մասնակցությանը, ինչպես նաև երկու երկրների երիտասարդության նկատմամբ իրականացվող քաղաքականությանը վերաբերող

փաստաթղթերի փոխանակմանը:

#### Հոդված 9

Կողմերը, համաձայն համապատասխան օրենքների, կիեշտացնեն մյուս Կողմի անձանց մուտքը երկիր, նրանց կեցությունը և մեկնումը այնտեղից, ինչպես նաև սույն Համաձայնագրով ստեղծված փոխանակման ծրագրերի իրագործման համար անհրաժեշտ նյութերի և սարքավորումների ներմուծումը և հետագա արտահանումը:

#### Հոդված 10

Անհրաժեշտության դեպքում Կողմերը կմասնակցեն խորհրդակցությունների, որպեսզի նախապատրաստեն հատուկ լրացուցիչ դրույթներ, որոնք կարող են պահանջվել սույն Համաձայնագրի կիրառման համար: Այդպիսի լրացուցիչ դրույթները պետք է համաձայնեցվեն հայտագրերի փոխանակմամբ, կամ անհրաժեշտության դեպքում Կողմերը կհամաձայնեն Համատեղ հանձնաժողովի միջոցով՝ հրավիրելով պարբերաբար հանդիպումներ:

#### Հոդված 11

Սույն Համաձայնագրի կիրառումից բխող ֆինանսական պարտավորությունները կկարգավորվեն Կողմերի փոխադարձ խորհրդակցությունների միջոցով:

#### Հոդված 12

Սույն Համաձայնագիրը ոչ մի կերպ չի վտանգի գոյություն ունեցող կամ ապագայում կնքվելիք երկկողմ համաձայնագրերից բխող իրավունքներն ու պարտավորությունները և չի ազդի Կողմերի այն իրավունքների և պարտականությունների վրա, որոնք բխում են այլ նմանատիպ համաձայնագրերից և որևէ այլ միջազգային պայմանագրից, որոնց Կողմ են նրանք հանդիսանում կամ կդառնան:

#### Հոդված 13

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ կմտնի դրա համար պահանջվող ներքին իրավական ընթացակարգերի կատարումն ավարտելու մասին Կողմերի վերջին ծանուցման օրվանից: Սույն Համաձայնագիրը կգործի հինգ տարի ժամկետով և ինքնաբերաբար կերկարաձգվի նույն տևողության հաջորդական ժամկետներով, եթե Կողմերից մեկը ընթացիկ ժամանակահատվածի ավարտից առնվազն

վեց ամիս առաջ չդադարեցնի այն դիվանագիտական ուղիներով ներկայացված գրավոր ծանուցումով:

#### Հոդված 14

Այն դեպքում, երբ որևէ Կողմ դադարեցնում է սույն Համաձայնագրի գործողությունը, ցանկացած փոխանակման ծրագիր, պլան կամ նախագիծ, որն ընթացքի մեջ է, ուժի մեջ կլինի մինչև դրա ավարտը:

Ի հաստատումն վերը նշվածի՝ կառավարությունների կողմից պատշաճ կերպով լիազորված անձինք ստորագրել են սույն Համաձայնագիրը:

Կատարված է Լիսաբոն քաղաքում 2000 թվականի նոյեմբերի 14-ին երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, պորտուգալերեն և անգլերեն, բոլոր տեքստերն էլ հավասարազոր են: Մեկնաբանման ընթացքում ծագած որևէ տարաձայնության դեպքում անգլերեն տեքստը կգերակայի:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2001 թվականի դեկտեմբերի 5-ից: